

ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԱՐՄՆՅՈՒՉ լրատվական հեռուստաալիքի «Իմ գրադարանը» հաղորդաշարի շրջանակներում իրականացված հարցազրույցից

*«Սպառել ամբողջ գրականությունը, թեկուզն է՝ զուտ մասնագիտական, էլ չասենք՝
գեղարվեստական, հնարավոր չէ, բայց անընդհատ կարդալն անհրաժեշտ է:
Այն մարդը, ով չի կարդում, չի տարբերվում նրանից, ով կարդալ չգիտի:
Կարծում եմ՝ նրանց միջև տարբերությունն իրոք մեծ չէ»:*

- Ձեր առաջին գիրքը, գրադարանի պատմությունը:

- Գրքի հետ շփվելու ավանդույթը, գրադարան ունենալու սովորույթը մեր ընտանիքից է գալիս: Առաջին գիրքը, որը մանկական հիշողություններումս տպավորվել է, թերևս, «Սասունցի Դավիթ» էպոսն է: Դեռ տառաճանաչ չէի, ծնողներս էին կարդում ինձ համար: Երկարօրյա ժամեր կային դպրոցում: Երբեմն էլ ոգևորված վերապատմում էի նախորդ օրը ընթերցվածը՝ այդպես լցնելով երկարօրյա պարապմունքների մի հատված: «Սասունցի Դավիթ» էպոսն էր առաջին գիրքը:

Մեծ գրադարան ունենք ծնողներիս տանը: Հայրս բանասեր է, մայրս՝ ֆիզիկայի մասնագետ: Ե՛վ բնագիտական, և՛ հումանիտար, և՛ հասարակագիտական բնագավառների ստեղծագործությունները բավականին շատ էին մեր գրադարանում: Ընդ որում, այդ տարիների՝ 70-ից, 80-ականների չափանիշներով մեր ծանոթների շրջանում, երևի թե, ամենամեծ գրադարանը մեր տանն էր: Այսօր էլ իմ գրքերի մի զգալի մասը ծնողներիս տանն է: Բնակարանային իմ փոքր աշխատասենյակում հավաքած են այն գրքերը, որոնք մշտապես օգտագործվում են կամ էլ այս պահին ձեռքի վրա են: Ճիշտ է, այսօր արդեն կան էլեկտրոնային տարբերակով գրականություն ունենալու հնարավո-

րություններ, ինֆորմացիայի կրիչներ, որոնք հետզհետե գալիս են փոխարինելու տպագիր գրքերին: Մի առիթով ընկերներիցս մեկը պնդում էր, թե կարիք չկա բնակարանում զգալի տեղ զբաղեցնող գրադարան ունենալ, երբ կարելի է նույն ինֆորմացիան փոքրիկ կրիչների վրա պահել կամ էլ համացանցից ներբեռնել: Բայց ես կարծում եմ, որ գիրքը, բացի այն, որ զուտ ինֆորմացիա կրող է, ունի նաև միստիկ գորություն: Ընտանեկան ավանդույթը ինքս էլ շարունակում եմ. երբ փողոցում, գրադարանում, գրախանութում հետաքրքիր գրքեր եմ տեսնում, փորձում եմ ձեռք բերել տան գրադարանի համար:

Մեր աշխատանքային գրադարանից միայն ես չէ, որ օգտվում եմ, թեև հիմնական օգտվողը ես եմ: Նաև տիկնոջս գրքերն են այստեղ: Վերջին շրջանում մեր փոքրիկը ևս իր որոշ գրքեր պահում է գրադարանի դարակներում: Ինչքան էլ փորձում ենք աշխատասենյակի դուռը փակ պահել, որպեսզի նա ներս չմտնի, ազելված պտուղը քաղցր է սկզբունքով և որևէ հետաքրքիր հնարքով կարողանում է թափանցել: Որդիս՝ Արամը, դեռ կարդալ չգիտի, բայց սովորել է գրքերը խնամքով թերթել: Ես դրա համար ուրախ եմ, թերևս դա խաղալիքներից ամենաօգտակարը կարող է լինել:

- Ուսանողական տարիներին ձեռք բերած գրքերը:

Ժամանակին, երբ պոստմոդերնիստական շրջանի փիլիսոփաների աշխատությունները Խորհրդային Միությունում այնքան էլ ակտիվ չէին հրատարակվում, դեռ ուսանողությանս տարիներին ոչ մեծ ժողովածուով հրատարակվեցին Ֆրիդրիխ Նիցշեի, Էրիխ Ֆրոմի, Զիգմունդ Ֆրեյդի, Ալբեր Բամյուի, Ժան-Պոլ Սարտրի ստեղծագործությունները՝ ընդհանրական վերնագրով, որը Նիցշեից էին վերցրել՝ «Աստվածների մթնշաղ»։ Այդպիսի շատ գրքեր ուսանողական տարիներին եմ ձեռք բերել։ Հիմա, իհարկե, գիրք գնելու ու գրադարանը համալրելու հնարավորություններն անհամեմատ ավելացել են ուսանողությանս տարիների համեմատ։

Մի շատ ուշագրավ գիրք էլ (ավելի ճիշտ՝ դրա լուսապատճենը) ձեռք եմ բերել 1990-ականների սկզբին, երբ գրում էի դիպլոմային աշխատանքս։ Գիտեի, որ Արթուր Շոպենհաուերն ունի «Eristise Dialektik» «Էրիստիկական դիալեկտիկա» վերնագրով աշխատություն, բայց Հայաստանի առաջատար գրադարանների կատալոգներում այն գտնել չէր հաջողվում։ Այդ տարիներին ինտերնետի հնարավորություն էլ չկար։ Ի վերջո, խնդրեցի Հանրային գրադարանի (այժմ Ազգային է կոչվում) տնօրինությանը թույլ տալ այդ աշխատությունը փնտրել հենց գրապահոցներում՝ Շոպենհաուերի՝ այնտեղ եղած հատորներն ուսումնասիրելով։ 19-րդ դարի երկրորդ կեսերին Լայպցիգում էդուարդ Գրիգերախի խմբագրությամբ հրատարակված՝ Շոպենհաուերի ձեռագիր ժառանգության (Hadschriftlicher Nachlass) հատորներից մեկում վերջապես գտա ինձ հետաքրքրող գործը։ Փաստորեն, դեռևս ուսանողական տարիներին կարողացա իմ գրադարանի համար ձեռք բերել Ա.Շոպենհաուերի աղմկահարույց աշխատության առաջին

հրատարակությունը՝ հին գերմաներեն շրիֆտով։

Շոպենհաուերը պոստմոդերնիզմի այն մտածողներից էր, որոնք կորցրել էին մարդու նկատմամբ հավատը։ Նա, ընդունելով Արիստոտելի և Սոկրատեսի հանճարն ու հեղինակությունը, միաժամանակ քննադատում է նրանց՝ մարդու հարցում չափազանց լավատեսորեն տրամադրված լինելու համար։ Մարդն, ըստ Շոպենհաուերի, բնականից բարոյապես փչացած երևույթ է։ Եվ եթե Սոկրատեսն ասում է, թե հաղորդակցման, բանավեճի նպատակը պետք է լինի ճշմարտության որոնումը, նոր գիտելիքի բացահայտումը, Արիստոտելը շարունակում է այդ ավանդույթը՝ մշակելով ու համակարգելով հաղորդակցման կառուցողականությունն ապահովող տեխնոլոգիաներ, ապա Շոպենհաուերը գտնում է, որ հաղորդակցման նպատակը պետք է լինի հաղթանակը ցանկացած գնով։ Մաքիավելու այս սկզբունքը գերմանացի փիլիսոփան պաշտպանում է իր աշխատության մեջ։ Շոպենհաուերը մոտ 40 հնարքներ է առաջարկում, թե ինչպես կարելի է դիմացինին խաբել, մոլորեցրել։ Ըստ գերմանացի իռացիոնալիստի, միայն այն դեպքում, երբ հաղթել ենք, և որևէ մեկը չի կասկածում մեր հաղթանակի վրա, կարելի է ըստ էության վերլուծել՝ արժե՞ արդյոք դիմացինի հետ համաձայնել՝ որոշ զիջումներ անե՞լ, թե՞ ոչ։

Բոլորը չէ, իհարկե, որ գերմանացի մտածողի հետ համաձայնում էին։ Ժամանակին ինքս էլ առիթ եմ ունեցել այդ տեսակետը ոչ միայն վերլուծելու, այլև քննադատելու իմ աշխատություններում։ Բայց, ինչպես Կանտի մասին էին ասում, որ Կանտի հետ կարող եք համաձայնել, դեմ էլ կարող եք լինել, բայց առանց նրա չեք կարող, ահա այդպես էլ առանց դասականների հնա-

րավոր չէ պատկերացնել նաև այսօրվա փիլիսոփայական միտքը:

Իմ գրադարանում մի առանձին հատված զբաղեցնում են ամենատարբեր բառարաններն ու հանրագիտարանները՝ սկսած օտար լեզուների և բացատրական բառարաններից մինչև գեղագիտական, բարոյագիտական, քաղաքագիտական, հոգեբանական, փիլիսոփայական, անգամ՝ բժշկագիտական հանրագիտարաններ:

- **Ճամանակակից մտածողների ստեղծագործությունները Ձեր գրադարանում:**

Մասնագիտական, փիլիսոփայական գրքերի շարքից, որոնք կարող են հետաքրքրել նաև բանասերներին, տրամաբաններին, հոգեբաններին, հանրամատչելի լինել գիտությամբ հետաքրքրվող հեռուստադիտողներին, ներկայացնեմ իմ ուսուցչի՝ ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի *Փիլիսոփայություն և լեզու* աշխատությունը, որը հրատարակվել է 1972 թվականին: Այստեղ շարադրված է մի հետաքրքիր տեսություն, որը հենց հեղինակի անունով էլ կոչվում է: Քիչ կան այսօր հայ մարդիկ մեր սերնդակիցների շարքում, ում անունով համաշխարհային գիտության մեջ կոնցեպցիաներ, ուղղություններ կան: Ահա դրանցից մեկն էլ ակադեմիկոս Գեորգ Բրուտյանն է և նրա լեզվաբանական լրացչության սկզբունքը: Գաղափարի ակունքները գալիս են Վիլիելմ ֆոն Հումբոլդտից, ըստ ում վարկածի՝ մարդու մտածողությունը, ազգի հոգևոր-մշակութային առանձնահատկությունները պայմանավորված են լեզվով: Գերմանացի մտածողի այս տեսակետը 20-րդ դարի ամերիկյան լեզվաբաններ Էդուարդ Սեյիբրն ու Բենջամին լի Ուորֆը զարգացրեցին մինչև լեզվաբանական դետերմինիզմի տեսություն: Վերջինիս համաձայն՝ լեզվով պայմանավորված են մտածողությունը, աշխարհայեցողությունը,

վարվեցողությունը: Այսինքն՝ ինչ լեզվով մարդը խոսում է, այդպես էլ մտածում է, ինչպես մտածում է, այդպիսի աշխարհայացք էլ ձևավորում է, ինչպիսի աշխարհայացք ձևավորում է, այդպիսի դիրքորոշում ու վարք էլ դրսևորում է: Այս տրամաբանությամբ շարունակելու դեպքում պետք է նկատել, որ վարքի վրա հասարակական հարաբերություններ են ձևավորվում, իսկ հասարակական հարաբերությունների վրա՝ ինստիտուտներ: Ուրեմն՝ լեզուն է կեցության տունը: Ինչպես խոսում ենք, այդպիսի քաղաքական մշակույթ ունենք, այդպիսի տնտեսություն: Այդ հիպոթեզի զգացված տեսակետը քննադատելով՝ Գ.Բրուտյանն առաջարկեց *լեզվաբանական լրացչության սկզբունքը*: Եթե փորձեմ կարճ վերաձևակերպել, ապա դրա էությունը հետևյալն է. մտքերը գրուցակիցներին փոխանցող լեզվական թաղանթի վերլուծությունը լրացուցիչ ինֆորմացիա է տալիս սուբյեկտի կողմից մտքի առարկայի ընկալման, գնահատման առանձնահատկությունների և այդ առարկայի նկատմամբ նրա ենթագիտակցական վերաբերմունքի մասին: Շատ ուշագրավ իրողություն է, որն անգամ հոգեբաններին, հոգեվերլուծաբաններին կարող է հետաքրքրել: Օրինակ ներկայացնեմ: Ֆրանսիացին *թոռ* հասկացությունը արտահայտում է *petite-fille* (*փոքր դուստր*) կամ *petit-fils* (*փոքր որդի*), եթե ընդհանրական, ապա՝ *petit-enfant*՝ *փոքր երեխա* տերմինով, անգլիացիները համապատասխանաբար՝ *grand-daughter* (*մեծ դուստր*), *grandson* (*մեծ որդի*) և *grandchild* (*մեծ երեխա*): Հարց է առաջանում՝ ինչու: Մի թե անգլիացին չի հասկանում, որ թոռը որդուց մեծ լինել չի կարող, ինչու՞ է ասում՝ մեծ որդի: Պարզվում է, խոսքն այստեղ կարող է լինել ոչ թե տարիքի, այլ երևույթի ենթագիտակցական ընկալման, թոռին արժեքավորելու մասին: Հաճախ մենք

էլ կատակում կամ, ավելի շուտ, լուրջ ենք ասում, քան կատակում, որ հայերն ավելի թոռասեր են, քան որդեսեր: Եվ այդ կապակցությամբ արդեն կատակում ենք ապարանցիների մասին, թե՛ «եթե իմանայի թոռն այս քան լավ բան է, ժամանակ չէի վատնի երեխաներ ունենալու վրա, միանգամից թոռներ կունենայի»: Այս ենթագիտակցական գործոնների մասին է խոսքը: Այնպես որ, երբ քաղաքական գործիչները, հռետորները ճառեր են ասում, պետք է զգույշ լինեն նաև բառերի ընտրության հարցում, որովհետև բառի ընտրությունը խոսում է նաև մտքի առարկայի, դատողության սուբյեկտի նկատմամբ մարդու ենթագիտակցական վերաբերմունքի մասին:

- Փիլիսոփայության գաղափարաբանական-մշակութային էությունը:

Այս հարցը մեր իրականության մեջ նորովի կարևորվեց 90-ականների վերջերին. կա՞ ազգային գաղափարախոսության, թե՞ չկա, կե՞ղծ կատեգորիա է, թե՞ իրական: Ի դեպ, Գարեգին Նժդեհի աշխատությունները ևս կան իմ գրադարանում, կան նաև նրա ժառանգության վերաբերյալ վերլուծական գործեր:

Անշուշտ, կեղծ կատեգորիա չի կարող լինել: Կեղծ, սխալ կամ ճշմարիտ կարող են լինել դատողությունները: Իսկ կատեգորիան կարող է լինել դատարկ կամ ծավալ ունեցող: Դատարկ են կոչվում այն կատեգորիաները, որոնք ունեն բովանդակություն, սակայն իրականության մեջ չկա առարկա, որն իր վրա կրի այդ բովանդակության մեջ ամրագրված հատկությունները: Այնպես որ, «կեղծ կատեգորիա» արտահայտության գործածումը զուտ տրամաբանական-մեթոդաբանական տեսակետից ընդունելի չէ: Այնուհանդերձ, ինչու՞ խնդիր ունենք ազգային գաղափարախոսության առումով. ազգային հոգե-

բանություն ունե՞նք, ազգային գիտակցություն ունե՞նք, ազգային գաղափարախոսության հարցում, կարծես, որոշ խնդիրներ ունենք: Ըստ իս, դա գալիս է ազգային փիլիսոփայության հզոր շերտերի բացակայությունից: Իսկ առանց փիլիսոփայության գաղափարախոսական որևէ լուրջ համակարգ լինել չի կարող: Անշուշտ, ունեցել ենք նշանավոր փիլիսոփաներ, բայց նրանք հիմնականում առանձին անհատականություններ են: Հայերս, իրոք, անհատապաշտ ենք, թիմային խաղերում էլ հաճախ դժվարանում ենք: Բայց անհատական հզոր բարձունքներ, իհարկե, ունեցել ենք՝ Դ.Անհաղթ, Գ.Նարեկացի, Գ.Տաթևացի, Վ.Ռաբունի...

Ի դեպ, նկատեցիք, որ իմ գրադարանում կան Սուկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի փոքր կիսանդրիները: Կարող է հարց առաջանալ. կա՞ն արդյոք հայ փիլիսոփաների կիսանդրիներ ևս: Իմ գրադարանում Դավիթ Անհաղթի աշխատությունների կողքին կա նաև նրա պղնձաձուլ բարձրաքանդակը. Հայոց փիլիսոփայական ակադեմիայի պարզն է՝ «Եռամեծ փիլիսոփա Դավիթ Անհաղթ» մեղալը:

Նշանավոր հայ փիլիսոփաներից շատերը հունաբան (ինչպես, օրինակ, Անհաղթ՝ նորալատոնական), արևմտամետ, արևելամետ դպրոցների ներկայացուցիչներ են: Եվ հաճախ, երբ ինքնության կամ գաղափարախոսության հարց է դրվում, խնդիրն արագ վերածվում է օրինատացիայի հարցադրման՝ ո՞ւմ հետ լինենք. եվրոպացու՞, ռուսի՞, ամերիկացու՞, թե՞ չինացու... Մինչդեռ, այսպիսի դեպքում պետք է եսակենտրոն մտածողություն: Միջազգային գիտաժողովներից մեկի շրջանակներում քննարկում էինք հետևյալ հարցը. հայերը արևելք են, թե՞ արևմուտք, ասիացի՞ են, թե՞ եվրոպացի: Հետաքրքիր մեկնաբանություններ էին ներ-

կայացնում և՛ հայ մասնագետները, և՛ արտասահմանցի գործընկերները: Իսկ երբ հերթը հասավ մեր գյումրեցի ընկերոջը (ասում են, թե գյումրեցիներին Աստված հումոր է տվել և չի խնայել՝ շոայլել է), նա հետաքրքիր կատակ արեց. «Ըշտը էդ հարցը, որ ընձի կուտան, ես ընձի ընկճված կզգամ, կզգամ էն արծվի դերում, որը մոլորվել է, չիդէ՛ ինքը հա՛վ է, թե՞ հնդուհավ»...

Այս իմաստով, իհարկե, ազգային փիլիսոփայական դպրոցի զարգացման լուրջ խնդիր ունենք: Այդ տեսակետից ծանրակշիռ արժեքներ ունենք ոչ միայն միջնադարյան Հայաստանում, ոչ միայն Նոր և Նորագույն շրջանի մտածողների շարքերում, ինչպես, օրինակ, Տիրան Չրաքյան, Կոստան Չարյան, որոնց աշխատությունները ևս ունեն, այլև՝ ի դեմս Փաստարկման երևանյան ժամանակակից դպրոցի, լայն ճանաչում ունեցող մերօրյա մտածողների: Եվ կարծում եմ, որ արտաքին ու ներքին քաղաքականության, հանրային կառավարման խնդիրների ճիշտ մեկնաբանման ու արդյունավետ լուծման գրավականներից մեկը պետք է փիլիսոփայական-մեթոդաբանական հենքը լինի:

- Գրադարանի գեղարվեստական գործերը:

Գեղարվեստական գրականության նկատմամբ ևս դժվար է անտարբեր մնալ: Ունեն և՛ հայ, և՛ արտասահմանյան գրողների ստեղծագործություններ: Օրինակ՝ ֆրանսիացի գրող Էմիլ Զոլյայի աշխատությունները, մեր սերնդակից մեկ ուրիշ ֆրանսիացու՝ Անրի Շենվիերի կամ նույն ինքը՝ Հայաստանում Ֆրանսիայի նախկին դեսպան Անրի Կյունիի ստեղծագործությունը, որը վերնագրված է «Երջանկություն ամեն տեսակի»: Այս գործը մի հետաքրքիր փորձ է՝ թվարկելու ու վերաիմաստավորելու երջանկության ըմբռնումները: Հեղինակը

քսանչորս տեսակետ է ներկայացնում (Ֆ.Շոպենի 24 պրելյուդների համանմանությամբ), թե ինչպիսի երջանկություններ մարդը կարող է ունենալ: Դրանցից մեկն էլ, ի դեպ, ասում է՝ ընթերցանությունն է, ապա նաև՝ քայլելու երջանկությունը, անգամ վաստակած ծերությունն է որպես երջանկություն ներկայացնում... Ահա նրա գրքի դարձերեսին զետեղված տողերը, որոնք կարելի է և՛ նախաբան, և՛ վերջաբան համարել. «Հունվարյան մի ուշ գիշեր ժամանեցի նախարմաստների այս երկիր, որ նախնիների պատկերացմամբ հանգրվանել էր երկրային դրախտը: Իմ կացարանի հարթակից պարզ եղանակին սահմանից անդին նշմարում եմ Արարատ լեռը, որի վրա իջավ Նոյյան Տապանը: Ինչևէ, կարծում եմ, որ սահմանները ներքուստ են, մենք պիտի կառուցենք տապանը՝ դրանք անցնելու համար: Այո, այս երկիրը դեռ կարող է երջանկության երկիր լինել: Մենք բոլորս երջանկության նավաբեկյալներն ենք»: Գուցե մի քիչ թախծոտ մեկնաբանությունների էլ է բերում, բայց, ամեն դեպքում, դրականն ավելի շատ է:

Վերջին շրջանում, երբ հեռուստատեսության, մամուլի մասին շատ էր խոսվում, Թումանյանի հրապարակախոսական նյութերը թերթելիս մի հետաքրքիր հասված գտա, որը շատ արդիական է հնչում: Ահա, տեսեք ինչ է գրում Թումանյանը 1910 թվականին. «Նա, ով երկար տարիներ բաժանորդ է եղել մեր թերթերին ու ընթերցող, լավ կլինեմ մի նստեր ու հաշիվ տար իրեն, թե ինչ է ստացել այդ թերթերից: Տարիներով կարդացել է՝ ժողովուրդ, ժողովուրդ... Ո՞վ է այդ ժողովուրդը, ի՞նչ է ուզում, ինչո՞ւ են միշտ նրա անունը տալիս. արդյոք հասկացե՞լ է այդ ընթերցողը: ...Աղմուկներ, աղմուկներ այսինչ հոգեբարձուի կամ այնինչ ուսուցչի չորս կողմը, մեծ մասամբ՝ լիքը հետին մտքե-

րով, կուսակցական կրքերով ու անձնական վիրավորանքներով: ...Ինչ գրել են՝ եղել է կամ բարեկամի գովասանք կամ թշնամու բամբասանք: Եվ մեր այն բազմությունը, որ կրթվել է այդ մամուլի վրա, զարմանալի թեթև, մակերևութորեն դատել ու հեշտ դատապարտել է սովորել, հայհոյել, ցեխը կոխել կամ բարձրացնել, երկինք հանել, դեմն ով ուզում է լինի... Չեն սիրում բնավ առարկել կամ հիմնավորել իրենց առարկությունները, չգիտեն հարգանք տա՞ծել դեպի հակառակորդը և նեղություն չեն քաշում գործի էությունը հասկանալու համար: Թերթերն էլ հոգս չեն քաշում գոնե մի տանելի լեզու ունենալու, և հայոց լեզվի աղճատման ու աղավաղման ամենամեծ պատճառներից մեկն էլ ինքը՝ հայ թերթն է»:

Թումանյանի սեղծագործությունների կողքին, ահա, մեկ այլ մեծ լռեցու՝ Մոս Սարգսյանի «Կանչն» է: Ժամանակակից ստեղծագործողներից Վահրամ Մարտիրոսյանի, Ռազմիկ Դավոյանի, Յուրի Պոյակովի, Նկոլայ Շահնազարյանի գործերն են, Ասպրամ Ծառուկայանի կազմած հուշերը Մոնթեի մասին, արևմտահայերից Իսկուհի Մինասի բանաստեղծությունները և այն: Պետք է խոստովանեն՝ գրադարանիս մեկ երրորդը կազմում են հեղինակների կողմից նվիրված գրքերը:

- Ընծայագրերով գրքերը:

Բավականին շատ են դրանք՝ թե՛ մասնագիտական և թե՛ գեղարվեստական: Յուրաքանչյուրն էլ արժեքավոր բովանդակություն ու պատմություն ունի: Մեծ մասը իմ ընկերների ու գործընկերների ստեղծագործություններն են և թանկ են ինձ համար:

Վերջերս, օրինակ, աշուղական արվեստի գիտակ ու ջատագով Թովմաս Պողոսյանից ստացա աշուղ Ջիվանու անհայտ երգերի ժողովածուն: Ակադեմիական մակարդակով

շատ լուրջ գործ է կատարված: Ի դեպ, ինձ շատ ուրախացրեց Թ.Պողոսյանի մտադրությունը՝ համանման մի ժողովածուով հրապարակել նաև աշուղ Մազյու (Աղաջան Փարոյան) համահավաք ստեղծագործական ժառանգությունը: Ասեմ, որ Աշուղ Մազային մայրիկիս պապն է, և մեր տանը որպես մասունքներ են պահվում Նոր Բայազետցի հայտնի աշուղի ստեղծագործությունները, նրան վերաբերող գրքերն ու բերանացի փոխանցված դեռևս ձեռագիր պատմությունները: Հայտնի է, որ մեծն Ջիվանուն Կարգախից Թիֆլիս տանողը, ասպարեզ հանողն ու դեպի աշուղական արվեստի Պառնաս ճանապարհ հարթողը Մազային է եղել:

- Մեփական ստեղծագործություններն ու գրքերը:

Գիտական հոդվածներս սկսել են հրապարակվել 1994 թվականից: Իմ առաջին գրքույկը հրատարակվել է 1996 թ. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության կողմից՝ Փաստարկման միջազգային ինստիտուտի «Երիտասարդ գիտնականի ամբիոն» մատենաշարով: Այդ պրակում երկու աշխատություններ են՝ «Վեճի տեսության հարցերը Հին աշխարհում» (հին հունական, չինական և հնդկական փիլիսոփայական մտքի շրջանակներում ձևավորված ժառանգության համեմատական վերլուծությունն է) և «Վիճաբանության մեթոդաբանական իմացաբանական տեսանկյունները»:

Հաջորդ գրքույկը կոչվում է «Բանավեճի մեթոդը ուսումնադաստիարակչական գործընթացում»: Գայանե Հովհաննիսյանի հետ միասին այն հրատարակման ներկայացրինք, երբ դեռ աշխատում էի Լուսավորության նախարարության Մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտում: Գրքույկը հրատարակման է

ներկայացրել Հայոց փիլիսոփական ակադեմիան:

Մյուս մենագրությունը՝ «Հասարակական համակարգի զարգացման հիմնախնդիրները» խորագրով հրատարակվեց 2003 թվականին: Աշխատանքի հիմքում դրեցի ամերիկացի սոցիոլոգ Ռոբերտ Մերտոնի կառուցվածքային-ֆունկցիոնալ վերլուծության սկզբունքը: Մերտոնը մի նոր ուղղություն բացեց, նոր հարթություն ձևավորեց սոցիոլոգիա գիտության մեջ՝ հետազոտության օբյեկտ դարձնելով ոչ թե մարդուն անհատապես, ոչ թե հասարակությունն ընդհանրապես, այլ հասարակության կառուցվածքը՝ ինստիտուտներ, խմբեր, գործընթացներ և ֆունկցիաներ: Այդ տեսակետից հետաքրքիր դիտարկումներ կան իմ աշխատության մեջ մեր հասարակությունում կատարվող փոխակերպումների, դրանց առանձնահատկությունների, դրական և բացասական, բացահայտ և ոչ բացահայտ (թաքնված, դժվար նկատելի) դիսֆունկցիաների վերաբերյալ: Վերջին շրջանում հետխորհրդային երկրներում կատարվող տնտեսական, քաղաքական բարեփոխումների անսպասելի, չկանխատեսված բացասական հետևանքների կապակցությամբ մի աֆորիստիկ միտք էր շրջանառվում՝ ՌԴ էքսվարչապետ Վիկտոր Չերնոմիրդինի ձևակերպմամբ. «Хотели как лучше, а получилось как всегда»: Խոսքը նաև այդպիսի իրողությունների մասին է:

- Որպես վերջաբան:

Հաճախ մոռանում են, որ կրթությունը բիզնես չէ: Բիզնեսը մի ոլորտ է, որտեղ մարդն ամեն ինչ անում է նյութական շահ ունենալու համար: Կրթությունը մի ոլորտ է, որտեղ տեղի է ունենում ավագ սերնդի փորձի ու գիտելիքների համակարգված փոխանցումը երիտասարդ սերնդին: Փողն այստեղ

նպատակ չպետք է լինի, այն պետք է միջոց լինի: Բայց քանի որ մեր կառավարման համակարգում հաճախ փողը դառնում է առաջին գործոնը, կրթությունը սկսում է որակական իմաստով նահանջել:

Եթե վերլուծենք գիտելիքների գնահատման այսօրվա մեր համակարգերը և համեմատենք նախկինում գործող սանդղակների հետ, կտեսնենք, որ նախկին 5-միավորանոց համակարգով «1» ստացողի գիտելիքները «բավարար» են գնահատվում մեր կրթական հաստատություններում: Սրանք խնդիրներ են, որոնց մասին մասնագետները պետք է բարձրաձայնեն նաև հրապարակումներով, քննարկումներով: Այդպիսի գործելակերպը մտավորականի կարևոր կոչումը պետք է լինի: Նա չպետք է բավարարվի զուտ գիտահետազոտական աշխատանքով, պետք է դրսևորի հասարակական ակտիվություն, փորձագիտական ձայնի իրավունքով միջամտի հանրային կաևորություն ունեցող խնդիրների քննարկման ու լուծման գործընթացներին:

Բայց կարծում եմ, որ մի կարևոր իրողություն կա: *Սպառել ամբողջ գրականությունը, թեկուզն՝ զուտ մասնագիտական, էլ չասենք՝ գեղարվեստական, հնարավոր չէ բայց անընդհատ կարդալն անհրաժեշտ է: Այն մարդը, ով չի կարդում, չի տարբերվում նրանից, ով կարդալ չգիտի: Կարծում եմ, նրանց միջև տարբերությունն իրոք մեծ չէ:*

Հաճախ ուսանողներին էլ խորհուրդ եմ տալիս կարդալ ոչ թե անգիր անելու համար, այլ կյանքում կիրառելու տրամաբանությամբ: Այլապես, մարդն, ով ունի ինֆորմացիա, բայց դա չի կիրառում իբրև գիտելիք, մեթոդական առումով կիրառությունները չի գտնում, չի տարբերվում զրքից, տետրից, սղագրության նոթատետրից, որովհետև երկուսն էլ ինֆորմացիայի կրողներ են, բայց

երկուսն էլ այն կիրառել չեն կարող: Այդ իմաստով, վստահ եմ, որ մտավորականի կոչումը պետք է լինի ոչ միայն գիտելիքներ ունենալը, ոչ միայն դասավանդելը, այլև պրակտիկայում դրանք կիրառելը, խնդիրները լուծմանը ծառայեցնելը:

Զրույցի ամբողջական տեսագրությունը կարելի է դիտել համացանցի հետևյալ կայք էջերում.

<http://www.armnewstv.am/programs/2293/216>

[23](#):

23 հունվարի, 2014 թ.

ԱՐՄՆՅՈՒԶ լրատվական հեռուստաալիքի
վիդեոդարան՝ «Հովհաննես Հովհաննիսյանի
գրադարանը»